## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 31-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 62-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 62-Ն որոշման մեջ կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

1) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ում՝

ա. բաժին 4, խումբ 2, դաս 1, 2421 տողում «13500.0» թիվը փոխարինել «12700.0» թվով:

բ. բաժին 4, խումբ 3, դաս 2, 2432 տողում «26500.0» թիվը փոխարինել «27300.0» թվով:

2) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման» հատված 3-ում՝

ա. հոդված 5129, 5123 տողում «10400.0» թիվը փոխարինել «9300.0» թվով:

բ. հոդված 5134, 5134 տողում «10748.1» թիվը փոխարինել «11848.1» թվով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի հուլիսի 12
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 32–Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին **որոշում է**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սարագյուղ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-101-0006-0005 կադաստրային ծածկագրով 0.0392 հեկտար հողամասն /հասցե՝ մարզ Շիրակի, Աշոցք համայնք, գյուղ Սարագյուղ, 1-ին փողոց, թիվ 3/1 օտարել աճուրդով՝ այդ հողամասում հասարակական նպատակային նշանակության եկեղեցապատկան շինություն կառուցելու նպատակով:

2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի հուլիսի 12
գյուղ Աշոցք

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Աշոցք համայնքի ավագանու 2021 թվականի
հուլիսի 12-ի թիվ 32 -Ա որոշման

**Աճուրդով օտարվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությանը համարվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի մեկնարկային գինն ու պայմանները**

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (դրամ) | Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%) | Գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկային գնի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մարզ Շիրակ, համայնք Աշոցք, գ. Սարագյուղ, 1-ին փողոց, թիվ 3/1 | 08-101 -0006-0005, 13042021-08-0022 | 0.03920 | բնակավայրերի | հասարարական կառուցապատման | Եկեղեցապատկան շինության կառուցման համար | չկան | բաց աճուրդ | 1 420 000 | 110.0 | 61 240 | 5 | 5 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ
ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 33 –Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» 4729 ՀՈԴՎԱԾԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 64-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 12-րդ, 14-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի թվով 8 բնակիչների դիմումները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից, /բաժին 10, խումբ 4, դաս 1, տող 3040 «Ընտանիքի անդամներ և զավակներ»/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի թվով 8 բնակիչներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ 300000 /երեք հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ ընդհանուր գումարով, համաձայն հավելվածի:

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի հուլիսի 12
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու
2021 թվականի հուլիսի 12 -ի թիվ 33 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

| | Բնակավայրի անվանումը | Ազգանուն, անուն | Գումարը /Հայաստանի Հանրապետության դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Աշոցք | Թամասյան Աշոտ | 120000 |
| 2 | | Մելիքյան Գայանե | 30000 |
| 3 | | Թամարյան Անահիտ | 30000 |
| 4 | | Տոնոյան Թանգանուշ | 15000 |
| 5 | | Վաղարշյան Ալիսա | 15000 |
| 6 | Մեծ Սեպասար | Պողոսյան Նաիրա | 30000 |
| 7 | Ղազանչի | Մարտիրոսյան Մարգարիտա | 30000 |
| 8 | Բավրա | Գաբրիելյան Սերյոժա | 30000 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 300000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 հուլիսի 2021 թվականի N 34-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքիավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող Սոցիալական Ներդրումների Տեղական Զարգացման ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով.
   «Զարգացող «ԱՇՈՑՔ» խոշորացված համայնքում առավել էկոլոգիապես մաքուր էլեկտրաէներգիայի ստացում ժամանակակից տեխնոլոգիաների՝ ֆոտովոլտային կայանների միջոցով»
2. Առաջարկի հաստատման դեպքում կատարել 5% ներդրում՝ ՍՆՏԶ Ծրագրի պահանջներին համապատասխան;
3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում,
4. Հանձնարարել համայնքապետարանին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ Ծրագրին մասնակցելու վերաբերյալ;
5. Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)**

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2021 թվականի հուլիսի 12

գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 հուլիսի 2021 թվականի N 35-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Աշոցք համայնքին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցելու համար:
2. Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցության հայտը կազմելու և այն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ ներկայացնելու համար ստեղծել նախաձեռնող խումբ՝ հետևյալ կազմով.

1) Կարեն Մանուկյան (համայնքի ղեկավար, նախաձեռնող խմբի նախագահ),
2) Լևոն Կոնդյան (համայնքի ղեկավարի տեղակալ, նախաձեռնող խմբի նախագահի տեղակալ),
3) Տիգրան Հակոբյան (համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ, նախաձեռնող խմբի քարտուղար),
4) Նորայր Պողոսյան (Մեծ Սեպասար բնակավայրի վարչական ղեկավար, հետադարձ կապի /բողոքներին արձագանքման համակարգող/),
5) Սրապ Հարությունյան (համայնքի ավագանու անդամ, նախաձեռնող խմբի անդամ),
6) Պավլիկ Սումբուլյան (Բավրա բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),
7) Ավետիք Ամիրյան (Ջույգաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),
8) Գեղամ Գևորգյան (Կրասար բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),
9) Լուսինե Սիմավոնյան (Ղազանչի բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),
10) Իսկուհի Սարուխանյան (Փոքր Սեպասար բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),

11) Ալինա Կարապետյան (Կարմրավան բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),
12) Հենրիկ Պողոսյան (Սիզավետ բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),
13) Իգիթ Առաքելյան (Թավշուտ բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),
14) Ալեքսան Իգիթյան (Սարագյուղ բնակավայրի վարչական ղեկավար, նախաձեռնող խմբի անդամ),
15) Սեդրակ Սաhակյան (ակտիվ երիտասարդ, նախաձեռնող խմբի անդամ ):

3. Հանձնարարել նախաձեռնող խմբին՝
   1) նախապատրաստել ծրագրի մասնակցության հայտ,
   2) համայնքի բնակիչներին տրամադրել տեղեկատվություն ծրագրի մասին, ապահովել նրանց մասնակցությունը հայտի նախապատրաստմանը:
4. Լիազորել նախաձեռնող խմբի անդամներին՝ Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին Աշոցք համայնքի մասնակցության հայտը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ներկայացնելու համար:

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝***

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2021 թվականի հուլիսի 12
գյուղ Աշոցք